ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 2

«ԱՔ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր

08.05.2019թ.
ժամը 10^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ԳՊ/ԳԱՊ՝ Ա. Աբգարյանը
Անդամներ՝
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ Է. Մխիթարյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ Մ. Կոստանյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ Մ. Մանուկյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ Ս. Առաքելյանը,
Մրցույթի համակարգող ԳՊ /Միմ Ա. Թաշչյան:

1. Հայտերի բացման և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

1.1 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ ըստ չափաբաժինների.

Հ/Բ N	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին
1	Տրանսպորտային լուսացույց	7 553 775
2	Տրանսպորտային լուսացույցի հատվածամաս	105 890

1.2 Հանձնաժողովի անդամ Ս. Առաքելյանը ներկայացրեց armeps.am համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտ, իսկ հանձնաժողովի անդամ Մ. Մանուկյանը հաստատեց ներկայացված հայտերի ցուցակը.

N	Մասնակցի անունը	Կապի միջոցները
1	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ	Էլ. Փոստ el@sec'am
2	<<ՄԵԳԱ ՊՌՈ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	Էլ. Փոստ megaproservis@yandex.ru
3	<<ԱՍԿԵՏ-16>> ՍՊԸ	Էլ. Փոստ safaryan.50@mail.ru

Հանձնաժողովը որոշեց բացել համակարգի կողմից ներկայացված (պիտանի) հայտերը: Հայտերը բացվել են 2019 թվականի մայիսի 3-ին, ժամը 10:00-ին, հասցե՝ քաղաք Արմավիր, Հանրապետության 32:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ԱՔ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին :

3. Գնային առաջարկների մասին

3.1 Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, << ՄԵԳԱ ՊՌՈ ՍԵՐՎԻՍ >> ՍՊԸ-ի և <<ԱՍԿԵՏ-16>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը /արձանագրությանը կցվում են մասնակիցների ներյայաձրած գնային առաջարկների բնօրինակից լուսապատճենահանված տարբերակները/:

3.2 Հիմք ընդունելով «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը հանձնաժողովը ընդունեց որոշում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ -ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի մասին

4.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով մասնակցին ծանուցում է առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել « ԱՔ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով պահանջվող փաստաթղթերը:

5. Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մասին

5.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում « ԱՔ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին

6.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը 10:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ ԳՊ/ԳԱՊ _____ Ա. Աբգարյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ _____ Է. Մխիթարյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ _____ Մ. Կոստանյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ _____ Մ. Մանուկյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ _____ Ս. Առաքելյան
Մրցույթի համակարգող ԳՊ /ՄԻՄ _____ Ա. Թաշչյան